

Արարատ Ստեփանյան

ՌՈՒՍ-ՉԵՉԵՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Չեչնիա, Ռուսաստանի Դաշնություն, ահաբեկչություն, հակաահաբեկչական գործողություն, Շամիլ Բասաև, Ելցին, Ասլան Մասխադով, Դադստան

Առաջին ռուս-չեչենական պատերազմն ավարտվեց Խասավուրտյան համաձայնագրով, որի արդյունքը եղավ ռուսական զորքերի դուրսբերումը Չեչնիայից, սակայն դա չթուլացրեց Չեչնիայում լարվածությունը և երկու ռուս-չեչենական պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում Չեչնիան այդպես էլ դուրս չէկավ «միջպետական ճգնաժամից»:

Չոհար Դուդակի մահվանից հետո Չեչնիայում սկսեց ուժեղանալ իսլամական էքստրեմիստների ազդեցությունը: Անկախ ազգային պետություն ստեղծելու գաղափարին փոխարինելու եկավ Զյուսիսային Կովկասում իսլամական պետություն ստեղծելու գաղափարը: Վահաբիստները ակտիվորեն սկսեցին ամրապնդել իրենց դիրքերը հանրապետությունում, ինչին նպաստում էր Չեչնիայի հանրապետության նախագահ Զելիմխան Յանդարբիևի քաղաքականությունը: Ամբողջ Չեչնիայում սկսեցին գործել շարիաթական դատարանները, ստեղծվեց շարիաթական գվարդիան: Հանրապետության տարածքում կազմավորվեցին գրոհայինների նախապատրաստական ճամբարներ:

1997 թ. հունվարի 27-ին Չեչնիայում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնցում ձայների 59.1%-ով հաղթանակ տարավ Ասլան Մասխադովը: Դաշտային հրամանատարների և կենտրոնական իշխանության լարված հարաբերությունների պայմաններում Մասխադովը որդեգրեց առավել հայտնի ընդդիմադիր գործիչներին կառավարության մեջ ընդգրկելու քաղաքականություն: 1998 թ. հունվարին Շամիլ Բասաևը նշանակվեց վարչապետ: Մյուս դաշտային հրամանատարները գնացին նախագահի հետ բաց առճակատման: Հունիսի 20-ին Սալման Ռադուևը հանդես եկավ տեղական հեռուստատեսությամբ՝ կոչ անելով չեչեններին հանրապետության ղեկավարների դեմ ակտիվ գործողությունների: Հաջորդ օրը նրա կողմնակիցները փորձ արեցին գրավել հետուստատեսությունը և քաղաքապետարանը, սակայն կառավարական ուժերը մտան կռվի մեջ և թույլ չտվին դա: Այս բախման արդյունքում սպանվեցին ազգային անվտանգության ղեկավար Լեչա Խուլտիկովը և ռադուևական ջոկատի շտաբի պետ Վահա Ջաֆարովը: Հունիսի 24-ին Մասխադովը երկրում մտցրեց արտակարգ իրավիճակ: Հուլիսի 13-ին Հուդերմեսում Արբի Բարակի և Սուլիմա Յամադակի ջոկատների միջև տեղի ունեցավ բախում, իսկ հուլիսի 15-ին Բարակի խմբավորումը գրոհեց Հուդերմեսի ազգային գումարտակի ճամբարը: Հուլիսի 20-ին Մասխադովը հայտարարեց շարիաթական գվարդիայի և իսլամական գնդի կազմալուծման մասին:

Սեպտեմբերի 23-ին Շ. Բասաևը և Ռադուևը պահանջեցին նախագահի հրաժարականը՝ մեղադրելով նրան սահմանադրությունը չարաշահելու և շարիաթի օրենքները խախտելու, ինչպես նաև պրոռուսական քաղաքականության համար: Ի պատասխան Մասխադովը լուծարեց Բասաևի կառավարությունը: Դրա հետևանքը եղավ այն, որ Մասխադովը կորցրեց երկրի մեծ մասը կառավարելու հնարավորությունը: 1999 թ. փետրվարի 3-ին Մասխադովը հայտարարեց ամբողջ երկրում շարիաթական օրենքի մուտքը: Պաշտամենտը գրկվեց օրինաստեղծ իրավունքներից և օրինաստեղծ բարձրագույն օրգան դարձավ Շուրան՝ իսլամական խորհուրդը: Ի պատասխան դրան Բասաևը հայտարարեց ընդդիմադիր Շուրայի ստեղծման մասին, որը ղեկավարեց ինքը: Մինչ պայքար էր ընթանում մասխադովականների և բասաևականների միջև, սահմանում իրադրությունը ավելի լարված էր դառնում: 1996 թ. Խասավյուրտի համաձայնագրից, ինչպես նաև ռուսական զորքերը Չեչնիայի տարածքից դուրս բերելուց հետո, չեչենական քրեական կառույցները, անպատիժ մնալով, զբաղվում էին զանգվածաբար մարդկանց գերի վերցնելով (հատկապես Չեչնիայում աշխատող ռուսներին) նավթի գողությամբ, թմրադեղերի մաքսանենգությամբ, կեղծ թղթադրամների տարածմամբ: Նրանք հարձակվում էին նաև հարևան ռուսական շրջանների վրա: Ռուսաստանի մուսուլմանական շրջանների երիտասարդ զինյալների ուսուցման համար Չեչնիայում ստեղծվում էին զորավարժանքի ճամբարներ: Չեչնիայի համար մեծ նշանակություն ունեին արաբական մեծաքանակ վարձկանները: Նրանց գլխավոր նպատակը Չեչնիայի և հարևան ռուսական շրջանների միջև հարաբերությունների ապակայունացումն ու հարավկովկասյան տարածաշրջանի անջատողական ձգտումների ընդլայնումն էր: 1999 թ. գարնան սկզբին Գրոզնու օդանավակայանում ահաբեկիչները գերի վերցրին Չեչնիայում Ռուսաստանի ՆԳՆ լիազոր ներկայացուցիչ Գենադի Շպիգունին¹: Ռուսական կառավարության համար պարզ էր, որ Չեչնիայի նախագահ Մասխադովը ի վիճակի չէ ինքնուրույն պայքարել ահաբեկիչների դեմ: Կենտրոնը քայլեր էր ձեռնարկում չեչենական ավազակախմբերի դեմ պայքարն ուժեղացնելու համար: Չեչնիայի ողջ տարածքով կենտրոնացված էին ոստիկանական ուժեր, Ստավրոպոլից տեղակայվեցին մի քանի հրթիռներ՝ նպատակային հարվածների համար: Չեչնիան ենթարկվեց տնտեսական շրջափակման, քանզի դրամական հոսքը Ռուսաստանից սկսեց կտրուկ նվազել: Երկու երկրների սահմանում առկա խնդիրներն ավելի ու ավելի դժվարացնում էին ահաբեկիչների համար թմրադեղերի տեղափոխումը Ռուսաստան, ինչպես նաև մարդկանց գերեվարելը:

1999 թ. մայիս-հուլիս ամիսների ընթացքում չեչենա-դադստանյան սահմանը վերածվեց ռազմականացված գոտու: Արդյունքում չեչեն հրամանատարների եկամուտները նվազեցին և խնդիրներ առաջացան զենքի գնման ու վարձկաններին վճարելու հարցում: 1999 թ. ապրիլից գլխավոր հրամանատար էր նշանակվել առաջին ռուս-չեչենական պատերազմում աչքի ընկած Վյաչեսլավ Օվչիննիկովը: 1999 թ. մայիսին ռուսական ինքնաթիռները հարձակվեցին Խաստաբի զինյալների

¹
<http://www.newsru.com/russia/04oct2002/mejidov.html>

վրա թերեք գետի մոտ: Դրանից հետո ներքին գործերի նախարար Վլադիմիր Ռուշայրոն հայտարարեց լայնամասշտաբ հարձակման նախապատրաստման մասին: Միևնույն ժամանակ չեչենական զինախմբերը Շամիլ Բասակի և Խատտաբի ղեկավարությամբ պատրաստվում էին զինված հարձակման Դաղստանի վրա: 1999 թ. ապրիլից մինչև օգոստոս ընկած շրջանում նրանք միայն Ստավրոպոլում և Դաղստանում իրականացրին շուրջ 30 հարձակում, սպանվեցին ու վիրավորվեցին մի քանի տասնյակ մարդիկ: Դաղստանի վրա հարձակումը նրանք որոշել էին իրականացնել լեռնային շրջանից, քանի որ այդտեղ զորքեր տեղակայված չէին: Ինչպես նշում են հետազոտողները, իրավիճակի ապակայունացումը Յյուսիսային Կովկասում ձեռնտու էր շատերին, առաջին հերթին՝ իսլամական աշխարհին՝ իրենց տիրապետության հաստատման համար, ինչպես նաև Պարսից ծոցի արաբական ներկայացուցիչներին: 1999 թ. օգոստոսի 7-ին իրականացվեց զինյալների զանգվածային ներխուժում Դաղստանի տարածք՝ Բասակի և արաբ վարձկան Խատտաբի գլխավորությամբ: Ձինյալների այս խմբավորումը բաղկացած էր օտարերկրյա վարձկաններից և «Իսլամական միջազգային խաղաղասեր խմբից», որը պլանավորում էր Դաղստանի բնակչությանը տեղափոխել իրենց տարածք: Դա ձախողվեց, քանզի բնակիչները համառ դիմադրություն ցույց տվեցին ահաբեկիչներին: Ռուսական կառավարությունը առաջարկում է Իչկերիայի կառավարությանը դաշնային ուժերի հետ համատեղ պայքարել Դաղստանի իսլամական ուժերի դեմ: Մեկ ամսից ավելի դաշնային ուժերը պայքար էին մղում ահաբեկիչների դեմ, ինչի արդյունքում վերջիններս ի վերջո ստիպված եղան տեղի տալ և Դաղստանից հեռանալ Չեչնիա: Այդ օրերի ընթացքում սեպտեմբերի (4-16-ը), Ռուսաստանի մի քանի քաղաքներում իրականացվեցին մի շարք ահաբեկչություններ: Ռուսական կառավարությունը տեսնելով, որ Մասխադովը ի վիճակի չէ միայնակ վերահսկողության տակ պահել իրավիճակը Չեչնիայում, որոշում է վերջնականապես պատերազմական գործողություններ սկսել Չեչնիայի տարածքում ահաբեկիչների ոչնչացման համար: Սեպտեմբերի 18-ին ռուսական զորքերը շրջափակում են Չեչնիայի սահմանները:

Սեպտեմբերի 23-ին Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը հրաման է արձակում «Ռուսաստանի Դաշնության Յյուսիս-Կովկասյան տարածաշրջանում հակաահաբեկչական արդյունավետ գործողությունների վերաբերյալ»: Դաղստանում կեսամսյա պատերազմի հետևանքով ռուսական կառավարությունը կանգնած էր երկընտրանքի առաջ. ամրապնդվել Չեչնիայի սահմանին և սպասել նոր հարվածների Բասակի կողմից, թե՞ հարձակվել թշնամու վրա և հենց իր տարածքում վերջնական պարտության ենթարկել: Կրեմլում դեռ բավականին ուժեղ էր «չեչենական սինդրոմը»: Չմոռանալով ռուսական հասարակության բացասական արձագանքը Բուդյոնովսկի և Գրոզնու պարտություններին՝ իշխանությունները վախենում էին, որ ընդդիմությունը կակտիվանա, կհաղթի սպասվող խորհրդարանական և նախագահական ընտրություններում: Այդ են վկայում նաև ղեկավարների և գեներալների հայտարարությունները այն մասին, որ Չեչնիայի տարածքում ռազմական գործողություններ չեն նախատեսվում:

Մինչ այդ 1999 թ. սեպտեմբերին իրավիճակը կտրուկ փոխվել էր: Ռուսաստանը ցնցվել էր մի շարք ահաբեկչական հարձակումներից: Սեպտեմբերի 4-ի երեկոյան պայթեցվեց Դադստանի Բույնակսկ քաղաքի շենքերից մեկը, զոհվեցին 64 և վիրավորվեցին 146 մարդ¹: Ինքնին այդ սարսափելի հանցագործությունը չէր, որ ցնցումներ էր առաջացրել երկրում, քանզի նմանատիպ երևույթները Հյուսիսային Կովկասում վերջին տարիներին դարձել էին սովորական: Բայց դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ ռուսական ոչ մի քաղաքի բնակչություն, այդ թվում և մայրաքաղաք Մոսկվայի, չի կարող իրեն լիակատար անվտանգ զգալ: Հաջորդ պայթյունը տեղի ունեցավ հենց Մոսկվայում: Սեպտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը և 13-ի առավոտյան ժամը 5-ին պայթեցվեցին 2 բազմաբնակարան բնակելի շենքեր: Առաջին պայթյունը տեղի ունեցավ Գուրյանով փողոցում, որին զոհ զնաց 109 մարդ, վիրավորվեցին 200-ը, իսկ երկրորդ պայթյունը՝ Կաշիրյան պողոտայում, զոհվեց ավելի քան 124 մարդ: Եվս մեկ պայթյուն տեղի ունեցավ Վոլգոդոնսկ քաղաքի կենտրոնում: Այստեղ 12 մարդ զոհվեց, 310-ը վիրավորվեցին: Պաշտոնական տվյալների համաձայն՝ ահաբեկչությունները կատարվել էին Չեչնիայի «Խատաբա» ահաբեկչական կազմակերպության կողմից: Այդ իրադարձությունները արագ փոխեցին հասարակության տրամադրությունը: Քաղաքացիները կանգնեցին անտեսանելի սպառնալիքների առաջ: Քչերն էին ուշադրություն դարձնում այն հանգամանքի վրա, որ հարձակումները ռուսական հատուկ ծառայությունների ծախսողումների հետևանք էին: Բացի այդ, չի բացառվում նաև այն տարբերակը, որ պայթյուններին մասնակցել են նաև ԱԴԾ-ն, հատկապես Ռյազանի գաղտնի իրադարձություններից հետո: Այստեղ 1999 թ. սեպտեմբերի 22-ի երեկոյան մի տան նկուղում գտնվեցին պայթուցիկ նյութերով լցված պարկեր²: Սեպտեմբերի 24-ին տեղի անվտանգության աշխատակիցները ձերբակալեցին 2 կասկածյալների, որոնք, Մոսկվայի ԱԴԾ-ի գործող աշխատակիցներ էին:

Անկախ նրանից, թե ով էր կանգնած ռուս քաղաքացիների նկատմամբ կատարված զանգվածային սպանությունների հետևում, Կրեմլը այն ամբողջությամբ օգտագործեց իր նպատակների իրականացման համար: Այժմ առաջնային խնդիրը սեփական ռուսական տարածքները Հյուսիսային Կովկասում պաշտպանելը կամ Չեչնիային շրջափակելը չէր, այլ սկսված ռմբակոծությունները դադարեցնելը: Ռուսական կառավարությունը չէր շտապում իրականացնել դեռևս 1999 թ. մարտին պլանով նախատեսված հարձակումը:

1999 թ. հոկտեմբերի 1-ին դաշնային ուժերը մտան Չեչնիայի տարածք: Հյուսիսային շրջանները զործնականում առանց կռվի գրավեցին, Չեչնիայի մյուս մասի վրա հարձակումը շարունակվեց: Այս փուլում, մեծ կորուստներից խուսափելու համար հիմնական գործողությունները կատարվում էին ժամր հրետանիով, որը թույլ էր տալիս դաշնային ուժերին խուսափել հակառակորդի հետ ուղղակի բախումից: Բացի այդ, ռուսական հրամանատարությունը ընտրել էր տեղական ավագանու և դաշտային հրամանատարության հետ բանակցություններ վարելու մարտավարությունը:

¹ St u . , <http://www.all-crime.ru/khronograf/09/0904.htm>

² http://www.loveread.ec/read_book.php?id=1309&p=85

Առաջին հերթին պահանջվում էր չեչենական զինուժը հեռացնել բնակավայրերից, հակառակ դեպքում սպառնալու էին դիմել օդային և ցամաքային ուժերի հարվածին: Երկրորդ, առաջարկվում էր անցնել ռուսների կողմը և համատեղ պայքարել վահաբիստների դեմ: Որոշ տեղերում այս մարտավարությունը հաջողություն ունեցավ: «Արևելք» խմբավորման հրամանատար գեներալ Գ. Տրոշևը նոյեմբերի 12-ին առանց կռվի գրավեց Յուդերմեսը՝ հանրապետության մեծությամբ երկրորդ քաղաքը¹: Տեղական դաշտային հրամանատարներ Յամագաև եղբայրները (3-ից 2-ը) անցան դաշնային ուժերի կողմը: Իսկ «Արևմուտք» խմբավորման հրամանատար Վ. Շամանովը նախապատվությունը տվեց ուժային մեթոդներով հարցի լուծմանը: Այսպես, Բանուտ գյուղը նոյեմբերյան հարձակման արդյունքում ամբողջությամբ ավերվեց, բայց շրջկենտրոն Աշխոյ-Մարտան ռուսական զորամիավորումները գրավեցին առանց մարտերի:

Չեչենական բանակի համար հանրապետությունը պաշտպանելու հնարավորությունները խիստ սահմանափակ էին: Շ. Բասաևը շատ լավ հասկանում էր ռուսական կողմի կրակային առավելությունները: Դրա հետ կապված՝ նա գտնում էր, որ չեչենական զորքերը պետք է տարվեն երկրի հարավային լեռնային շրջանները: Այստեղ դաշնային ուժերը առանց զրահատեխնիկայի և սահմանափակ օդուժով անխուսափելիորեն ստիպված կլինեին մտնել պատերազմի մեջ: Այդ ծրագրին դեմ էր Չեչնիայի նախագահ Ա. Մասխադովը: Նա Կրեմլին խաղաղության կոչ անելով՝ միևնույն ժամանակ չէր ցանկանում մայրաքաղաքը առանց կռվի հանձնել: Մասխադովը կարծում էր, որ Գրոզնու վրա հարձակվելիս խոշոր կորուստները կստիպեն ռուսական կառավարությանը խաղաղ բանակցություններ սկսել:

Դեկտեմբերի առաջին կեսին դաշնային ուժերը գրավեցին Չեչնիայի ամբողջ հարթավայրային մասը: Չեչենական ջոկատները կենտրոնացան լեռնային շրջաններում, բայց բավականին խոշոր կայազորը շարունակում էր պահել Գրոզնին: Իշխող կուսակցության՝ «Միասնության» հաջողությունները խորհրդարանային ընտրություններում հանգեցրին ռազմական գործողությունների աշխուժացմանը: Այն, որ իրական ռազմական գործողությունները դեռևս չէին սկսվել, քչերին էր անհագստացնում: Այդ պատճառով Կրեմլում որոշում ընդունվեց կիրառել հարձակումը շարունակելու և հանրապետությունը Ռուսաստանի կազմ վերադարձնելու քաղաքականությունը: Հնարավոր էր գործողությունների 2 տարբերակ. գրոհել Գրոզնին կամ շրջափակման ենթարկել այն և հարձակումներ ձեռնարկել հանրապետության լեռնային շրջանների վրա: Կրեմլում ընտրեցին երրորդ տարբերակը: Անտեսելով մարտունակ զորամիավորումների սահմանափակ թիվը՝ երկու ուղղությամբ էլ մարտական գործողություններ սկսվեցին: Արգունյան կիրճի հարավային մասում՝ Վրաստանի հետ սահմանի մոտ, իջեցվեց տակտիկական դեսանտ: Վերջինիս կողմից փակված ճանապարհը ստրատեգիական նշանակություն չունեց, քանի որ լիովին կառուցված չէր, սակայն դաշնային ուժերի ակտիվությունը ընտրություններից առաջ ստեղծում էր անհրաժեշտ տեղեկատվական բազա: Այս շրջանի ռուսական զորամիավորումներն ընկան շրջափակման մեջ: Նրանց տեղափոխել կամ օգնություն ուղարկել հնարավոր չէր

¹ Տես , , .2001, .297:

անբարենպաստ եղանակների պատճառով: Հակառակորդի ուժերն այս ուղղությունից քշելու նպատակով ռուսական ուժերը Դադստանից գրոհեցին Չեչնիայի Վեդենյան և Նոժայ-Յուրտովյան շրջանները: Դրա հետ մեկտեղ Արգունյան կիրճի հյուսիսային ելքի շրջան արագ տեղափոխվեցին Գրոզնիի շրջակայքում գործող դաշնային ուժերը: Պարզ էր դառնում, որ լեռնային մարտերը չէին լինելու ամառյուն և արագ, իսկ անհայտ աուլներ, որ գրավում էին դաշնային ուժերը, Կրեմլի համար անհրաժեշտ հաղթական իմիջ չէին ստեղծում: Այս պայմաններում որոշում կայացվեց գրոհել Գրոզնու վրա: Դաշնային ուժերի ցրվածության հետևանքը եղավ այն, որ Գրոզնիի համար մարտերը տևեցին 6 շաբաթ, իսկ լեռներում մինչև ձմեռվա վերջը:

1999 թ. դեկտեմբերի 5-ին ռուսական խմբավորումը սեղմեց օդակը Գրոզնու շրջանում¹: Այս պահից վերջնականապես պարզ դարձավ, որ այս պատերազմում դաշնային ուժերի ղեկավարությունը չուներ հատուկ պլան, և հանրապետության տարածքում ռազմական գործողությունները տակտիկական բնույթ ունեին: Նույնիսկ Գրոզնու գրավման գործողության նախօրեին ռուսական հրամանատարությունը չուներ հակառակորդի ուժերի թվաքանակի մասին տեղեկություն: Գրոզնու չեչենական խմբավորման թվաքանակը նույնիսկ գործողության ավարտից հետո հստակ չէր՝ 3000-ից (նշում է գեներալ Տրոշևը) մինչև 7000 (գեներալ Բուլգակով): Շամանովը նշում է նույնիսկ 9000: 1999 թ. դեկտեմբերի 6-ին ռուսական հրամանակարողությունը վերջնաժամկետ ներկայացրեց. խաղաղ բնակիչներին մինչև դեկտեմբերի 11-ը քաղաքից տեղահանել, իսկ գրոհայիններին՝ հանձնվել²: Նշված ժամկետում քաղաքը չլքած անձինք համարվելու էին ահաբեկիչ: Սակայն չեչենները քաղաքը չլքեցին: Խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, արտասահմանյան լրատվամիջոցների խիստ ուշադրության պայմաններում, Կրեմլը չէր կարող համարձակ գործողությունների դիմել: Իրավիճակը կտրուկ փոխվեց դեկտեմբերի 19-ի ընտրություններից հետո: 1999 թ. դեկտեմբերի 24-ին Մոզդոկում միացյալ զորամիավորման հրամանատար գեներալ Կազանցևը ընդունում է «Կարմիր աստղի» հատուկ թղթակից Աստաշկինին և գրույցի ընթացքում հավաստիացնում, որ Գրոզնու գրոհ չի լինի: Հանկարծակի հնչում է պաշտպանության նախարար Ի. Սերգեևի զանգը, ով հետաքրքրվում է իր ենթակայից, թե ինչու մինչև հիմա քաղաքի գրոհը չի սկսվել: Կազանցևը փորձում է վիճել, պնդում է, որ զորքը դեռևս պատրաստ չէ և անհրաժեշտ է ևս 2 շաբաթ, բայց ի պատասխան լսում է. «Մենք չունենք այդ 2 շաբաթը»: Հիմա արդեն վստահորեն կարելի է ասել, որ ռազմական գործողությունների կտրուկ արագացումը կապված էր Ելցինի հրաժարականի մասին Կրեմլում ընդունված որոշման և արտահերթ նախագահական ընտրությունների հետ:

Դեկտեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը սկսվեց Գրոզնու գրոհը³: Ռուսական հրամանատարությունը, հաշվի առնելով 5 տարվա վաղեմության դեպքերի փորձը, չէր փորձում քաղաք նետել ծանր տեխնիկայի մեծ ուժեր: Հիմնական հարվածը հասցվում

¹ Տե՛ս , 2001. . 487:

² Տե՛ս , 19- , 21- , 2003, էջ 124:

³ Նույն տեղում:

էր ներքին գորքերի գրոհային ջոկատների միջոցով՝ Գանտեմիրովի 5500 հոգանոց կամավորների օգնությամբ: 15000-անոց խմբավորումը արգելափակել էր Գրոզնին: Գրոհը տևեց մեկ շաբաթից ավելի և հունվարի 2-ին կասեցվեց: Իրենց հերթին չեչենները հասցրին մի շարք հակահարվածներ: Բասակի ղեկավարած ջոկատը ճեղքեց Գրոզնու պաշտպանական օղակը արևմտյան ուղղությամբ, գրավեց Ալխան-Կալա և Կրասնոպարտիզանսկ բնակավայրերը: Այն բանից հետո, երբ այստեղ ոչնչացվեց դաշնային գորքերի թիկունքային ուժերիի շարասյունը, ղեկավարությունը շտապ այս շրջան ուղարկեց 21-րդ Սոֆրինյան բրիգադը: Կրասնոպարտիզանսկը գրավվեց, իսկ Ալխան-Կալան շրջապատվեց, բայց հանդիպելով հակառակորդի դիմադրությանը՝ ռուսները շատ արագ կանգ առան: Պաշտոնական տվյալներով գրոհի կասեցման պատճառը մառախուղն էր, բացի այդ, անհրաժեշտ էր միջանցք տրամադրել խաղաղ բնակիչների հեռանալու համար: Մարտական գործողությունների ամսագրի տվյալներով (Կարպով, «Կովկասյան խաչ 2») 21-րդ բրիգադը հունվարի 5-ին վերսկսեց գրոհը, բայց դիմադրող գրեթե չկար: Գիշերը հակառակորդի հիմնական ուժերը լքել էին գյուղը և անցնելով գետը՝ հեռացել հարևան Կուլարի գյուղը: Հակառակորդին հետապնդելու գործողությունը ձախողվեց, քանի որ չեչենները կարծես գետնի տակ էին անցել: Մի փոքր ուշ օդային հետախուզությունը հայտնաբերեց նրանց Սամաչեկից հյուսիս արևելք: Նրանց հետապնդելու ուղարկված ուժերը հաջողություն չունեցան և Բասակը վերադարձավ Գրոզնի: 2000թ. հունվարի 9-ին հետևեց հերթական հակահարվածը, այս անգամ արդեն հանրապետության արևելքում: Արգունում չեչենական ջոկատները՝ թվով մինչև 300 հոգի (այլ տվյալներով՝ 2000), գրավեցին երկաթուղային կայարանը և կապի բաժանմունքը ու պատանդներ վերցրին: Շալիում 1500 գրոհայիններ գրավեցին ադմինիստրատիվ շենքերը, Հուդերմեսում չեչենական ջոկատները Ջալկա գյուղի շրջանում ավտոշարասյան վրա ուշադրությունը շեղող հարձակում են գործում, ինչպես նաև գրավում են կամենդատուրան և գերիներ վերցնում: Չեչենների հսկողության տակ անցավ Կովկասում դաշնային ճանապարհի Գրոզնի, Արգուն, Հուդերմես հատվածը: Ռուսական հրամանատարության կողմից պաշարվածներին օգնության ուղարկված ուժերը ևս ենթարկվեցին հարձակումների: Արգունում, Հուդերմեսում և Շալիում իրավիճակի կարգավորման վերաբերյալ դաշնային հրամանատարությունը հայտարարեց միայն 2 օրից, երբ հակառակորդի ուժերը հեռացել էին լեռները: Արդյունքում Գրոզնու գրոհը վերսկսվեց 2000 թ. հունվարի 17-ին¹: Թվում էր, թե չեչենական պաշտպանությունը պետք է ծնկի գար օդային և հրետանային հարվածներից: Սակայն այդպես չեղավ: Ռուսական զորամիավորումները մախկինի մնան առաջ էին շարժվում դանդաղ տեմպերով՝ կրելով զգալի կորուստներ: Միայն 2 ամիս անց Գրոզնու մարտերում տեղի ունեցավ շրջադարձ: Դա բացատրվում է մի քանի պատճառներով. առաջին չեչենական կայազորը կրում էր մեծ կորուստներ, որոնք քաղաքի շրջափակման պայմաններում դժվար

¹ Տե՛ս

, 1999 ,

. <http://topwar.ru/4281-shturm-groznogo-1999.html>

էր վերականգնել¹: Երկրորդ՝ պարզ դարձավ, որ ռուսական հրամանատարությանը նախագահական ընտրություններից առաջ անհրաժեշտ է հաղթանակ ցանկացած գնով: Երրորդ՝ Արևմուտքի ճնշումը Կրեմլի վրա բավարար չէր Չեչնիայում ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Բացի այդ, 2000 թ. հունվարի վերջին դաշնային ուժերը գրավեցին Նուժայ-Յուրտովյան և Վեդենյան շրջանները Չեչնիայի հարավում: Այստեղ չեչենների հսկողության տակ էր մնում միայն Արգունյան կիրճը: Այս պայմաններում Բասաևը որոշում է թողնել քաղաքը՝ նպատակ ունենալով վերախմբավորել ուժերը լեռներում և գարնանը անցնել լայնամասշտաբ պարտիզանական պատերազմի: 2000 թ. հունվարի վերջին չեչենական ուժերը սկսեցին հեռանալ Գրոզնուց: Համաձայն պաշտոնական տեսակետի՝ ռուսական հրամանատարության համար անակնկալ չէր իրադարձությունների նման զարգացումը: Գեներալները հավաստիացնում են, որ հակառակորդի նահանջը կապված էր «գայլերի որս» հատուկ գործողության հետ: Ըստ այդ գործողության չեչենական հրամանատարներին վաճառվել էին սխալ քարտեզներ, որոնցից օգտվելով հակառակորդը՝ կրեց հսկայական կորուստներ: Այս հավաստիացումը որոշ չափով համապատասխանում էր իրականությանը: Իրոք, չեչենները կազմում էին շուրջ 1500 մարդ՝ սպանվածներով և գերիներով: Սպանվեցին մի շարք դաշտային հրամանատարներ, Բասաևը կորցրեց ութը: Չեչենական պատերազմի 6 ամսվա արդյունքները (սկսած Դադստանում օգոստոսյան մարտերից) անհանգստացնող էին: Դաշնային կորուստները գերազանցում էին 1500-ը, կար 4500 վիրավոր: Չեչնիայի տարածքի մեծ մասը և մայրաքաղաքը գրավված էին ռուսական զորքերի կողմից, բայց լեռներում շարունակում էր գործել հակառակորդի ավելի քան 4 հազարանոց խմբավորումը: Փետրվարի 29-ին լրատվամիջոցները, հենվելով ռազմական աղբյուրների վրա, հայտարարեցին դաշնային ուժերի կողմից հակառակորդի հսկողության տակ գտնվող վերջին շրջկենտրոն Շատոյ գյուղի գրավման մասին՝ ներկայացնելով այս իրադարձությունը որպես ռազմական գործողությունների ավարտ: Սակայն դրան հաջորդած Ուլուսկերտում Պսկովյան դեսանտային 6-րդ վաշտի ոչնչացումը, Կոմսոմոլսկ գյուղի համար մարտյան կռիվները և լայնածավալ պարտիզանական պատերազմի սկիզբը հակառակն ապացուցեցին²:

Ռուսական զորքերի կողմից Գրոզնու գրավումից հետո՝ 2000 թ. փետրվարի սկզբին, չեչենական վերահսկողության տակ մնացել էր միայն Արգունյան կիրճի մի հատվածը՝ Դուբա-Յուրտից մինչև Շատոյ: Հենց այստեղ էին կենտրոնացել ահաբեկիչների հիմնական ուժերը Բասաևի, Խատտաբի, Գելաևի հրամանատարությամբ: Եվ ռուսական ղեկավարության գերագույն խնդիրը նրանց ոչնչացումն էր: Այս գործողության իրականացման համար էր, որ բացի «Արևմուտք», «Արևելք» խմբավորումներից ստեղծվեց նաև «Կենտրոնականը» Բուլգակովի հրամանատարությամբ: Այս խմբավորման առաջնահերթ խնդիրն էր ոչնչացնել Շատոյի

¹ Տե՛ս . . . , . . . , 19- . . . 21- . . . , . . . , 2003, . 498:

² Տե՛ս . . . , . . . , « . . . », 2002, . 351:

ահաբեկիչներին: 2000 թ. փետրվարի 25-27-ին «Արևմտյան» խմբավորումը շրջափակեց Արգունյան կիրճը արևմտյան կողմից, իսկ «Արևելյանը»՝ արևելքից և հյուսիսից: Փետրվարի 29-ին Շատոյը անցավ դաշնային ուժերի ձեռքը: Իսկ ահաբեկիչները թվով մոտ 4000, սկսեցին նահանջել դեպի հյուսիս: Նրանց թվում էր, թե այլևս չեն կարողանա ճեղքել պաշարումը Արգունյան կիրճում, քանզի այնտեղ տեղակայվել էր ռուսական շուրջ 20000-ոց զորք: Բասակի և Խատտաբի գլխավորությամբ, նրանք ուղղվում են արևելք և շարժվում դեպի հարևան Վեդենյան շրջան: Սա անսպասելի էր դաշնային ուժերի համար: Ավելի ուշ հրամանատար Շամանովը նշել է, որ իրենց կողմից չէր ստեղծվել պաշտպանական գիծ այդ ուղղությամբ: Այս մասին իր հուշերում գրել է նաև Տրոշևը՝ նշելով, որ ահաբեկիչների անցումը հարևան շրջան անակնկալ էր դաշնային զենեռալների համար: Դաշնային հրամանատարությունը որոշեց դեսանտ իջեցնել Իսի-Կորտի բարձրությունից, բայց դա անհնար էր, քանզի անտառում հարմար տեղ չկար: Կռիվ սկսվեց ահաբեկիչների և դաշնային ուժերի միջև: Հրամանատար Եվտյուխինը փորձում է օգնական ուղղաթիռներ կանչել, բայց դրանք չեն գալիս: Ռուսական հրամանատարությունը սկզբում չէր ցանկանում ընդունել իր ծախողումը, դեռ ավելին, մայիսի 5-ին զենեռալ Տրոշևը նշել է¹, որ իրենք տվել են ընդամենը 31 զոհ հակառակորդի 400-600 զոհի դիմաց: Ոչ ոք մեղավորներ չէր փնտրում այն բանում, որ «ջախջախված» ահաբեկիչները կռվի վերջում կարողանում են ոչնչացնել կարևոր միավորումներից մեկը և դուրս գալ շրջափակումից: Բայց ահա մարտի սկզբին դաշնային ուժերին հաջողվում է շրջափակել և ոչնչացնել Կոնստոնտին Գյուրում գտնվող չեչեանական մեկ այլ խմբավորում՝ Գելակի գլխավորությամբ: Այստեղ կռիվը ձգվում է 2 շաբաթից ավելի, հակառակորդի դիմադրությունը հաջողվում է կտրտել: Ա. Չերկասովայի տվյալների համաձայն ահաբեկիչները տվել են 1000-ից ավելի սպանված, Գելակին հաջողվում է դուրս գալ շրջափակումից: Սա բնավ դուր չի գալիս Բասակին, որի ճնշման տակ Գելակը ստիպված է լինում իր համախոհների հետ հեռանալ Վրաստան մինչև 2002 թ. սեպտեմբերը:

Դաշնային ուժերի այս հաղթանակից հետո պարտիզանները զենքը վայր չդրեցին: Չչեչեանական հրամանատարությունը հրաժարվում է առաջին պատերազմի ժամանակ որդեգրած տակտիկայից, մասնավորապես բնակավայրերին տիրանալուն և դրանք երկարատև իրենց վերահսկողության տակ պահելուն: Մասխադովը և այլ հրամանատարներ որդեգրում են միակ ճիշտ տակտիկան՝ պարտիզանական պատերազմը: 2000 թ. մարտից մինչև 2002 թ. սեպտեմբերը ահաբեկիչները խուսափում էին պատերազմական ակտիվ գործողություններից Չչենիայի սահմանից դուրս: Սակայն Իմզուշեթիայի և Դաղստանի տարածքում բախումներ լինում էին: Միաժամանակ իրակա-նացվում էին մի շարք ահաբեկչական հարձակումներ Մոսկվայում, Ստավրոպոլում, Կարաչաև-Չերքեզիայում և Դաղստանում:

Պատերազմը գնալով ավելի է ծավալվում: 2002 թ. հոկտեմբերի 23-ին ահաբեկիչները Բասակի գլխավորությամբ գրավում են Դուբրովկայի թատերական

¹ Տես , , , 2001, . 224:

համալիրը¹: Գերի են վերցվում ավելի քան 700 մարդ: Ահաբեկիչները սպառնում էին այրել թատրոնի տարածքը, եթե դաշնային ուժերը որևէ բան ձեռնարկեին: Նրանց գլխավոր պահանջը ռուսական ուժերի դուրս բերումն էր Չեչնիայի տարածքից: Նրանք ձգտում էին բանակցություններ վարել, որոնց մասնակցեցին որոշ քաղաքական գործիչներ: Երկու շաբաթվա ընթացքում հաջողվում է ազատել 25 պատանդների: Բանակցությունների հետևանքով ոչ բոլորն են ազատվում, քանզի ահաբեկիչները հույսը դրել էին հենց պատանդների վրա, որոնց սպառնացող վտանգը կանխելով՝ դաշնային ուժերը կշարունակեին բանակցությունները: Հոկտեմբերի 25-ին պետք է իրականացվեր հանդիպում 2 կողմերի միջև, բայց հաջորդ առավոտ սկսվում է հարձակումը, որի ընթացքում կիրառվում է գազ: Ոչնչացվում են ահաբեկիչները, և դաշնային ուժերի գործողությունը հաջողված է համարվում: Գազի օգտագործման հետևանքով զոհվում է շուրջ 130 հոգի²: Դուբրովկայի վրա գտնվող թատրոնում գազ չօգտագործվեց: Գաղտնիությունը պահպանելու միտումով բժիշկներին ընդհանրապես չզգուշացրին գազի կիրառման մասին: Առաջին բուժօգնությունը պատանդներին հասցվեց փողոց դուրս բերելու ժամանակ: Սկզբից ևեթ պարզ էր, որ բոլոր պատանդներին անհնար է տրամադրել բժշկական օպերատիվ օգնություն՝ մեծ թվաքանակի պատճառով: Լրագրող Սուդատովի տվյալներով, սրահում գտնվող պատանդների թիվը 697 էր: Գազը բաց թողնվեց առավոտյան 5,30-ին, իսկ պատանդների դուրս բերումը սկսվեց 7,00-ին: Արդեն 7,20-ին թատրոնի իրար վրա դրված դիակների թիվը 100-ից ավելի էր (պաշտոնական տվյալներով եղել է 112): Բացի դրանից պաշտոնապես նշվեց, որ 13 պատանդներ զոհվեցին հիվանդանոցում, ևս 5 մարդ սպանվեց ահաբեկիչների կողմից:

Իշխանության ներկայացուցիչները գազի կիրառումը արդարացրին՝ պատճառաբանելով, որ դա միակ հնարավորությունն էր խուսափելու բոլոր պատանդների զոհվելուց: Պաշտոնական հետաքննության տվյալներով հարձակման սկզբում դիմադրողները պաշտպանվում էին 13 ավտոմատով և 8 ատրճառակով: Նույն ժամանակ սրահում գտնվող գրոհայինները ոչինչ չէին ձեռնարկում՝ իրենց պաշտպանելու համար:

Ահաբեկիչների կողմից պայթուցիկ չկիրառելու վերաբերյալ առաջ քաշվեց երկու վարկած. առաջին՝ ահաբեկիչները գիտակցաբար հրաժարվեցին պատանդների հետ զոհվելուց, երկրորդ՝ թատրոնի պայթեցումը ի սկզբանե չէր մտնում նրանց ծրագրերի մեջ: Վերջին դեպքում կարելի է ենթադրել, որ իրական պայթուցիկների փոխարեն եղել են նմանօրինակ պայթուցիկներ: Ամեն պարագայում ռուսական կողմի հաղթանակը Դուբրովկայում չդադարեցրեց հետագա ահաբեկչությունները: 2003 թ. նորից ահաբեկչություններ եղան Մոսկվայում, 2004 թ.- սեպտեմբերի 1-ին ահաբեկիչները գրավեցին ՌԴ Հյուսիսային Օսիայի Բեսլան քաղաքի դպրոցներից մեկը և պատանդ վերցրին 1128 երեխա ու մեծահասակներ: Սեպտեմբերի 3-ին սկսված փոխհրաձգության և դրան հաջորդած գրոհի ժամանակ զոհվեց 329 մարդ, այդ թվում՝ 159 երեխա:

¹ Տես XX , 2 . / , 1999, . 443:

² Տես , , 2006. . 561:

Ահաբեկիչների գրոհը ղեկավարում էր Շամիլ Բասաևը: 2005 թ. սկզբին Մասխադովի, Խատտաբի, Աբու ալ-Վալիդի, 2006-ին Բասաևի ոչնչացումից հետո ահաբեկիչների դիվերսիոն գործողությունները զգալիորեն նվազել էին: 2005-2008 թթ. Ռուսաստանում չի կատարվել ահաբեկչական ոչ մի հարձակում: Չնայած 2009 թ. ապրիլի 19-ին պաշտոնապես դադարեցվել էր հակաահաբեկչական գործողության կիրառում, սակայն դրանով իրավիճակը վերջնականապես խաղաղված չէր: Ահաբեկիչները, վարելով պարտիզանական պատերազմներ, ավելի ակտիվանում էին: 2009 թ. աշնանից իրականացվում է ահաբեկիչների պարագլուխների ոչնչացումը: Որպես պատասխան տեղի են ունենում ահաբեկչական մի շարք հարձակումներ, այդ թվում և Մոսկվայում: Ձինված հարձակումներ, ահաբեկչական և ոստիկանական գործողություններ տեղի էին ունենում ոչ միայն Չեչնիայում, այլև Դաղստանում, Ինգուշեթիայում, Կաբարդինո-Բալկարիայում: 2009 թ. մայիսի 15-ից սկսած ռուսական ուժերը հարձակման են անցնում Դաղստանի, Ինգուշեթիայի, Չեչնիայի լեռնային շրջանների ահաբեկիչների դեմ, ինչը հրահրում է ահաբեկիչների համապատասխան գործողությունները:

Ստեփանյան Արարատ, Ռուս-չեչենական երկրորդ պատերազմը – Ռուս-չեչենական 2-րդ պատերազմը, որի ռազմական իրադարձությունները տեղի են ունեցել Չեչնիայի ու Հյուսիսային Կովկասի սահմանին, պաշտոնապես կոչվում է հակաահաբեկչական գործողություն: Ռազմական գործողությունների ակտիվ շրջանը 1999-2000 թթ. էր, իսկ հետո, երբ Չեչնիայի տարածքն անցնում է ռուսական զորքերի վերահսկողության ներքո, ռազմական գործողություններն ավելի սուր բնույթ են ընդունում, և կոնֆլիկտը երկու երկրների միջև ավելի է երկարաձգվում ու վերածվում «ծխացող» հակամարտության: 2009 թվականի ապրիլի 16-ի դրությամբ հակաահաբեկչական գործողության ռեժիմը կասեցվեց:

Степаян Арарат, Вторая русско-чеченская война – (, 30 1999) . 1999 2000 , , . 16 2009 .

Ararat Stepanyan, Second Russian-Chechen War – The second Russian-Chechen war (officially called the counter-terrorist operation (CTO) – which took place on the territory of Chechnya and neighboring regions of the North Caucasus, began on 30 September 1999 (the date of entry of Russian Forces in Chechnya.) The active phase of hostilities lasted from 1999 to 2000, then, with the establishment of the control over the territory of Chechnya by the armed forces of Russia, it has been turned into a smoldering conflict which actually, continues to this day. April 16, 2009 the CTO regime was cancelled.

Արարատ Ստեփանյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ

